

Title: VALLEY OF WEEPING

by Dr. w. euGene Scott, PhD Stanford University,
Preached at the Los Angeles University Cathedral
Copyright ©2007, Pastor Melissa Scott; all rights reserved

Վերնագիր. ԱՐՏԱՍՈՒՔԻ ՀՈՎԼԻՏ

Դր. Ժեն Սքոտի կողմից Ստեմֆորդի համասարանի պրոֆեսոր,
Քառորդվական է Լոս-Անջելեսի «Յունիվերսիտի կաթոլիկալ»-ում
Հեղինակային իրավունք © 2007թ. Հովլի Մելիսա Սքոտ. բոլոր իրավունքները վերապահված են
(Բոլոր աստվածաշնչան մեջբերումները կատարված են Աստվածաշնչի Արարատյան քարզմանությունից)

ԱՐՏԱՍՈՒՔԻ ՀՈՎԼԻՏ

Ձեզ քաջ հայտնի են այն յոթ ուղերձները, որոնք ես քարոզում եմ ամեն տարի, ներառյալ Զատիկի քարոզը: Այս ուղերձը, մեկն է այն յոթից, որը ես քարոզել եմ իմ հոր հուղարկավորման արարողության ժամանակ, և այսօր ես պատրաստվում եմ շեղվել Զատիկի սովորական քարոզից: Այս ուղերձը ինձ համար մի հոգևոր փարոս էր հասուն կյանքի և կատարվում ծառայելու ողջ ընթացքում Սաղմ. 84. «Երանի (անգլ.՝ օրինյալ է) այն մարդկանց, որ նրանց զորությունը թեզանից է»:

Ընդգծեք «Երանի (անգլ.՝ օրինյալ)» բառը: Այսօր եկեղեցիների հետ են կապում այն օրինությունները, որոնք տեղակայված են ժամանակի և տեղի մեջ, բայց եբրայերենում այս բառը նկարագրում է որպես երբեք չփոփոխվող օրինված վիճակ:

Այս ուղերձը ես քարոզում եմ ավելի քան 30 տարի և չունեմ այլ բացատրություն, բացի նրանից, որը արդեն ասել եմ իմ առաջին քարոզի ժամանակ: Բանը նրանում է, որ ամեն տարի պետք է նորից ու նորից քարոզեմ այս թեման, որովհետև ես չեմ հասել այդ օրինված վիճակին: Ես գիտեմ եբրայերենից թարգմանությունը, որը նկարագրում է օրինված վիճակ, որը երբեք չի փոխվում: Դա երբեմն պատահող վիճակ չէ: Այն օրինված լինելու հաստատուն վիճակ է: Ես դեռ չեմ հասել, բայց գիտեմ ինչպես հասմել: Ահա թե ինչու եմ քարոզում այս ուղերձը: Ամեն ոք չի, որ հասնում է այդ օրինված վիճակին՝ «Օրինյալ է այն մարդը»: Այս խոսքը առանձնացնում է այդ մարդուն ամբոխից: Օրինությունը հենց այնպես չի թափվում երկնքից բոլորի վրա, բայց կան ոմանք, որ ունեն դա՝ “Երանի (անգլ.՝ օրինյալ է) այն մարդկանց, որ նրանց զորությունը թեզանից է, որ նրանց սրտերում պատրաստված ճանապարհներ կան”:

6-րդ խոսք՝ «Անցնելով...» - այս բայի ձևը պարզ ցույց է տալիս, որ օրինությունը տրվում է նրան, ով գնում է ինչ-որ տեղ, և անընդհատ փոփոխությունների մեջ է: Ինձ արդեն դուր չեն գալիս այդ ճանապարհին հանդիպող որոշ պայմաններ: Ես բավականին ծեր եմ փոփոխություններ սիրելու համար և այնպիսի բաների միջով եմ անցել, որ կարիք չկա, որ Աստված ինչ-որ բան սովորեցնի ինձ այդ բնագավառում:

Երբ ես 30 տարեկան էի, սովոր էի քարոզել սա, և քարոզում էի մեծ ուժով և եռանդով եկեղեցիներում, որտեղ հաճախում էին ալեհեր մազերով մարդիկ: Ուղղակի հասկացեք քրիստոնեության մասին մի բան՝ այնտեղ չկան նստատեղեր, չկա ավարտվածություն, չկա վերջնակետ, չկան ձեռքբերումներ, ուր հասմելով կկանգնենք ու կասենք. «Նայեցեք այս դժբախտներին, որոնք փորձում են հասմել նրան, ինչին ես արդեն հասել եմ»: Քրիստոնեությունը ճանապարհ է, ոչ թե նպատակակետ մինչև որ հասնենք կատարյալ վերջնակետին: Դա նշանակում է, որ փոփոխությունները անխուսափելի են:

Քի՞ Ուխտում խոսվում է մի ազգի մասին, որոնց մասին Աստված այդքան էլ չէր մտածում, Նա ասում է. «Երանք հանդարտ մնացել են իրենց մրուրի վրա»: Այս բառը վերցված է գիմեգործությունից, որ նշանակում է նստվածք: Եվ հետո Աստված շարունակում է. «Նա

չթափվեցավ ամանից աման», և իրենց մրուրը դեռ իրենցում է և իրենց համն ու հոտը վատ, որովհետև չեն դատարկվել ամանից աման: Գինեգործության մեջ, գինին դատարկում են մի անոթից մյուսի մեջ այնքան ժամանակ, մինչև այն մաքրվում է մրուրից՝ նստվածքից:

Երբ ես ավելի երիտասարդ էի, իրականում ես ապրում էի դրանում: Դու պետք է ակնկալես փոփոխություններ: Այսօրվա հաղթանակը նախապատրաստում է քեզ սատանայի հարձակումներին: Քրիստոնյայի ճանապարհին չկա այնպիսի մի տեղ, որտեղ կարելի է ուղղակի պառկել, ասելով՝ «Այո՛, ես սկսեցի, նպատակին հասա, ապացուցեցի Աստծուն, որ ինձ հետ ամեն բան կարգին է և իման մնում է միայն պառկել և սպասել, թե երբ Նա կվերցնի ինձ տուն»: Եվ եթե քեզ դա դուր չի գալիս, ուրեմն, դու նույնիսկ մոտ էլ չես ասվածի իմաստին:

Ուղերձի այս մասը ես քարոզում էի շատ արագ, քանի որ ինձ համար այն շատ պարզ էր: Ես երիտասարդ էի և անցնում էի իմ ճանապարհը: Ուղերձի այս մասը ես ատում եմ: Դուք, որ լսում եք ինձ արդեն 15 տարի լավ գիտեք, թե ինչպիսի հապճեպությամբ եմ ես փորձում այն ավարտել: Մեջքերելով Դոկտոր Տոգերին: «Քրիստոնեությունը ճանապարհ է, ոչ թէ նպատակակետ»: Ես նկատել եմ, որ շատերի համար քրիստոնեական ծեռքբերումը կենտրոնացած է մեկ նպատակի շուրջ՝ հասնել ամբիոնին, պաշտպանվածության մասին մի քանի խառը ճառեր կրկնել, և ոգևորելով ճանապարհել: Սրանով դու հավիտյան ապահով դարձար: «Արա ինչ ուզում ես»: Դու արել ես այն: Մեկ անգամից վճարել ես քո հավիտենական ապահովագրությունը, դու ապահովագրված ես: Իսկ այժմ մի կողմ քաշվիր և տեղի գիշիր հաջորդին: Դու հերթական գլխամաշկն ես իմ գոտու վրա:

Հոգեգալստականները մի փոքր առաջ գնացին, բայց «Շնորհիքի երկրորդ որոշիչ աշխատանքի» մարդիկ ավելի առաջ գնացին՝ նրանք ունեցան երկրորդ փորձառությունը, որ մարդիկ ունեցել են և երբ դու ստացար դա, նշան արեցիր մնացածին, որպեսզի նրանք էլ ստանան: Ու երբ արդեն ունես, դառնում ես մյուսներից ավելի լավը, այնպես որ, ավելին ունենալու կարիք չունես: Ես արդեն պատմել եմ ձեզ, երբ պատանի էի, մասնակցում էի Հոգեգալստական եկեղեցում վրանային հավաքույթներին և շատ զայրացած էի, որովհետև մյուս երեխանները ունեին «այն», ինչը ես չունեի և ֆուտբոլ էին խաղում: Իրականում, նրանք փորձում էին տալ ինձ «այն» թեփով լցված վրանում: Բայց ես ոչ այնքան Աստծուն էի ցանկանում, որքան գլուխ ազատեի այդ ամենից և վերջապես գնայի ֆուտբոլ խաղալու:

Նպատակակետեր: Ինչպես Ուեյնսուլդ Նեյբորը ասել է, որ Հոգեգալստականների, «Շնորհիքի երկրորդ որոշիչ աշխատանքի» մարդկանց՝ նազովեցինների ողբերգությունը, ինչպես նաև նրանց, ովքեր հասկացան, որ սկզբնակետից այն կողմ կա մեկ այլ փորձառություն, այն է, որ փորձառությունը, որը պետք է բերեր բարձր մակարդակի անմեղություն, դարձավ ահավոր մեղքի՝ հոգևոր հպարտության պատճառ: Նրանք գուտ հավաքվում են միասին, որպեսզի գրավեին ուրիշներին իրենց մոտ:

Կանգառներ չկան: Ահա թե ինչու մենք նորից վերսկսում ենք այս ծառայությունը: Սրանից առաջ ամենը նախապատրաստություն էր, ամենը ուսուցում էր: Եվ այդ ամենը պատրաստում էր մեզ նրան, որ աշխարհը դարձնենք մեր հոտը: Իրականում, անելով նոր հավատքի քայլ, մենք հասկանում ենք, որ պանդուխտ ենք այս երկրի վրա: Մենք ճանապարհ ենք ընկել և այս խոսքը համընկնում է այդ ծշմարտության հետ, ասելով, երանելի է այն մարդը, անհատը, որը առանձնացած է ամբոխից և ունի իր կյանքում իրեն չլքող օրինված վիճակ, նա ճանապարհորդության մեջ է, որտեղ անընդհատ փոխվում է:

Ահա թե ինչ է ասում հաջորդ արտահայտությունը. «Արտասուրի ձորով (անգլ.՝ հովիտով) անցնելով»: Բնագրում գրված է «Բաքա»: Գիտեք արդյոք, ի՞նչ է նշանակում «Բաքա»: Այն թարգմանվում է որպես «լաց»: Եվ այսպիսով, դա նույնիսկ ավելի վատ է, քան ես արդեն ասացի՝ ոչ միայն անընդհատ փոփոխություններ, ճանապարհորդի կյանքը փոփոխությունների և ուղևորության մեջ է... (Ես հիշեցնում եմ, որ սա 1991թ.-ի Զատիկն է, և մեր առջևում ևս մեկ տարի է), և երանելի մարդու ճանապարհի մի մասը անցնում է «արտասուրի հովիտով»: Շատ

հաճախ քրիստոնեության մեջ տեղ ենք տալիս այն թյուր կարծիքին, որ եթե դու իրոք Աստծո կամքի մեջ ես, ապա դու չես ունենա այդ «արտասուրի հովիտները»:

Իմ Աստվածաշունչն ասում է, որ երանելի մարդ, լինելով երանելի վիճակում, ընդորում այդ վիճակի որակը չի փոփոխվում, միևնույն է անցնում է արտասուրի հովիտներով:

Այժմ ես հենց այն տեղում եմ, որի շուրջ քարոզել եմ նախորդ կիրակի եսայի գիրքը. «Ո՞վ կա ձեզանում Տերից վախեցող, Նրա ծառայի ձայնին լսող, որ գնում է խավարում և ճառագայթ չունի»: Ես հոգմել եմ այս ծոխացրած կրոնից, որը ստեղծում է թյուր կարծիք, որ եթե դու հայտնվել ես արտասուրի հովիտի հենց կենտրոնում, ապա կամ դու ես ինչ-որ պատճառով հեռացել Աստծուց, կամ էլ նա է հեռացել քեզանից: Դա միայն ճանապարհի մի մասն է: Այս շաբաթվա ընթացքում, ես քարոզում կամ սովորեցնում եմ Ելից գրքից, երբ Յին Ուխտի այդ ժողովրդին Աստված տարավ անապատ... Երկրորդ Օրինացում ասվում է, «փորձելու և սրտի միջինը իմանալու համար»: Անցած շաբաթվա ընթացքում, տեսանք, որ Կարմիր ծովի հաղթանակի ժամանակ Աստված կատարեց ամեն ինչ: Նրանց մնում էր միայն. «..կանգնել և տեսել Տիրոջ փրկությունը»:

Կարմիր ծովի հաղթանակի համար նրանք ոչինչ չարեցին... (Ես չեմ հիշում, թե երբ է Աստված եղել այդքան բարի իմ նկատմամբ): Մովսեսն ասաց. «Կանգնեցե՛ք և տեսե՛ք Տիրոջ փրկությունը»: Աստված ճեղքեց ծովը և վերացրեց բոլոր թշնամիներին: Դուք արդեն լսել եք ինձանից Պարսից ծոցի պատերազմի մասին: Դուք գիտեք, որ ես լսել եմ, թե ինչպես են այդ բոլոր քրիստոնյաները աղոթում իրենց թշնամիների համար: Լսեք, ես այդպես չեմ աղոթում: Ես աղոթում եմ, որ նրանք բարից էլ անշունչ լինեն, և դրա համար շատ լավ հիմնավորում ունեմ ըստ Աստվածաշնչի: Ես նկատի ունեմ այն, որ Յին ուխտի սուրբերը կանգնած էին Կարմիր ծովի մոտ, երբ փարավոնի զորքը ծովում խորտակվեց: Աստված շատ մեծ հումորի զգացում ունի, մինչ նրանց խորտակելը, նա հանեց նրանց մարտակառքերի անհվները: Նրանք վագեցին և խեղդվեցին:

Աստծո ժողովուրդը պարում էր և ուրախանում. «Նայեցե՛ք, ինչ արեց Աստված մեզ համար. Նա քարի նման խորտակեց այդ ծեր փարավոնին»: Այնուհետ Աստված երեք օր տարավ անապատով, որտեղ նրանք ծարավից տրտնջում էին, մինչև հասան Սեռայի դառը ջրերը: Յետո նրանք դուրս եկան Սուրբի անապատից և ճանապարհվեցին դեպի հաջորդ օրինության վայրը, Եղին, «այնտեղ տասներկու ջրի աղբյուրներ և յոթանասուն արմավենիներ կային»: Երբ մտածում ես, արդյոք այդ շոգը իրենց խայտառակվելու արիթ չէր, որովհետև 3 միլիոն 250 հազար մարդ կռվում էին միջյանց հետ 12 աղբյուրների և 70 արմավենիների համար: Դրանից հետո Աստված տարավ ժողովրդին Սին անապատը, թարգմանաբար՝ «կավ», որտեղ կերակրեց նրանց երկնքից թափվող մանանայով և օրեցօր սովորեցրեց, որ ինքը հոգ է տանում նրանց մասին:

Այնուհետև նրանք հասան Սինա սարին, ինչը նշանակում է «Սինայի Աստվածը», կամ «կավոտ տեղի Աստված», որտեղ էլ նրանք դաս առան: Կարծ ասած, դա այն անապատն էր, որտեղ նրանք սովորեցին Աստծո ճանապարհներն և Նրա մատակարարելու կարողությունը: Նրանք այնքան էլ չսովորեցին ուրախանալ, երբ տեսան Աստծո հաղթանակող ձեռքը ծովի միջով անցնելուց, և այնքան էլ չսովորեցին Եղինի աղբյուրների մոտ, չսովորեցին, երբ Աստված խոսում էր Սինայ սարի վրա, իսկ նրանք սարի տակ պարում էին ոսկե ցլիկի շուրջ:

Յենց փորձությունների ժամանակ են քրիստոնեական բնավորության գծերը առանձնացնում նրանց, ովքեր իրոք ունեն դա, նրանցից, ովքեր չունեն: Եվ այս «Արտասուրի հովիտը» նման է «Սին անապատին», կամ էլ Ռափիդիմին, ուր նրանք առաջնորդվեցին, որը թարգմանաբար նշանակում է «հանգստի վայր», այն իրենից ներկայացնում է կեղտոտ, քարքարոտ և փշոտ մի վայր: Այս մասին մենք կխոսենք հաջորդ շաբաթ: Եվ այսպես, Աստծո ճանապարհները մեր ճանապարհները չեն: Այն ամենը ինչի մասին ես ուզում եմ ասել, և այսքանով ավարտել այս մասը, ամբողջությամբ հակասում է ավանդական շատ ուսմունքների, որոնք քրիստոնեությունը վերածել են տարբեր բաղադրատոմսերի՝ վայրկենական հաջողության և լավ կյանքի հասնելու

համար, այն դեպքում, երբ երանելի մարդը, ըստ գրվածքների, տեսնում է, որ իր ճանապարհը ընկած է «արտասուրի հովիտներով»:

Անցյալ տարի հարկ եղավ հիշեցնել ինքս ինձ դրա մասին: Այս արտասուրները տարբերվում են մյուսներից: Ես հիշում եմ ինչպիսի հովիտներ էի անցնում իմ միսիոներության ժամանակ, երբ քարոզում էի այդ մասին 18 տարի աշխարհի շուրջ ճանապարհորդելիս: Այժմյան արտասուրի հովիտները տարբերվում են անցածներից: Լինում են պահեր, երբ կցանկանայի, որ այս ամբիոնը ուղղակի չլիներ: Լինում են պահեր, երբ Աստծո օրինության ծանրությունն ու ճնշումը թույլ է տալիս վեր բարձրանալ սովորական կարողություններից, որոնք տրված են Աստծուց, հաջող աշխատանք իրականացնելու համար, կամ էլ տալիս են ուժերից և մտքից վեր կարողություններ, այդ հովիտները միմյանցից շատ տարբեր են:

Բայց գոյություն ունի դեռ քրիստոնեության մեջ այսպիսի իրականություն, որ քո Աստծուն հետևելու ընթացքում, կամ մարդիկ, ովքեր նստած են հեռուստացույցի առջև և ծաղրում են քեզ, նրանք այնպես են ապրում, կարծես երկնքում ոչ մի ամպ չկա, նրանք կամ լցված են կեղտով ու ստով, կամ էլ պարզապես չեն ճանաչում Աստծուն: Նրանք ծառայում են այս աշխարհի իշխանին: Եվ քանի որ, Աստված ցուլի բնավորություն չունի, և ամեն հարցում չի փորձում հրել նրանց: Մրանք այն մարդիկ են, որոնք պատկանում են Աստծուն, և որոնց էլ սատանան անընդհատ փորձում է խլել:

Ես դեռ չեմ ազատվել «արտասուրի հովիտներից»: Ես չեմ խոսում սովորական լացի մասին, ինքս շատ անգամ եմ լացել և կարոտել իմ հորը: Ես խոսում եմ այն հոգևոր հովիտների մասին, որտեղ դու հավատքի քայլ ես անում, իսկ Աստված երբեք... Կա մի երևույթ, որի մեջ Աստված հաստատուն է. Այն բանից հետո, երբ քեզ ոգեշնչում է մի բան անելու իր համար, ինքը ինչ-որ տեղ հեռանում է:

Երբեք նկատե՞լ եք դա: Ես պատրաստ եմ հանձնվել Աստծուն և ասել. «Օ՛հ» - ես Աստծո հետ բավականին պարզ եմ խոսում, «Վերցրու՝ դա: Դու ներքաշեցիր ինձ հերթական մի անախորժության մեջ: Քեզ դա հաջողվեց: Հաջողություն»: Բայց նա ինձ երբեք չի թողնի:

«Ես խաղաղվում եմ: Ես կանցնեմ այս կեղտոտ իրավիճակից: Աստված կստանա այն»: Եվ նա կսրբի իմ արցունքները, և կհետևի ինձ և կանհանգստացնի ամբողջ ճանապարհին: Աստված երբեք հուսախար չի անում: Նույն հետևողականությամբ ևա կիայտնի ինձ իրեն բավականաչափ իրական: Եվ ես կասեմ. «Շատ լավ, ինչ-որ բան կա այս հավատքի ճանապարհի մեջ. Ես կգնամ նրանով: Եկեք անենք դա Աստծո համար»: Հետո ամեն անգամ նա գնում է արձակուրդ: Հակառակը երբեք չեմ տեսել: Ես հիմա խոսում եմ այս տեսակի «արտասուրի հովիտների» մասին: «Ու՞ր ես Դու Աստված: Դու ինձ քաշեցիր հերթական մի խառնաշփոթի մեջ»:

Ես արդեն ասել եմ, որ չկա ավելի մեծ բան, քան այն, որ Աստված կարող է ինձ սովորեցնել: Ես գիտեմ ինչի մասին եմ այսօր քարոզում, բայց ինչու՞ պետք է ամեն տարի դա սովորեմ: Դու կարծում ես, որ ամեն ինչ խաղաղ է, և հանկարծակի հայտնվում է ինչ-որ բան, որը օախչախում է ամեն ինչ: Ծեր զինվորի նման, որը շատ անգամներ է եղել այնտեղ, ես այլևս այդպես հեշտ չեմ ոտքի կանգնում: Երբ ես սկսեցի քրիստոնյայի կյանքով ապրել, այդպիսի պատերազմը երանելի էր թվում: Ես զգիտեի, որ սատանան այդ աստիճան դաժան է: Ես երգում էի փոքրիկ ու հիմարիկ երգեր, սրա նման. «Սատանայի անունը գրիր կոշիկիդ տակ և քայլիր տրորելով նրան»: Ես նկատի ունեմ, որ նա ավելի դաժան է, քան «Նինձյա կրիաները»:

Ես գիտեի Աստծո բոլոր խոստմունքները, ես լսում էի քարոզիչների, որոնք միամիտ քարոզում են. - «Սատանան ձեր ոտքերի տակ է և Աստված հաղթել է նրան», «Նա Ով ձեր մեջ է, ավելին է, քան նա, որ այս աշխարհում է»: Ես ասում էի. «Այդ ամենը ճիշտ է» և հետո սատանան հարվածում էր և գետին տապալում իմ 75 ոտնաչափ հասակ ունեցող մարմինը: Ես ոտքի էի կանգնում և ասում. «Այս պատերազմը դեռ նոր է սկսվում»:

Հիմա ես կրաքնվեի ծառի ետևում, որպեսզի խուսափեի սատանայից: Ես հոգնել եմ պայքարելուց: Ես այլևս չեմ ուզում այդ արտասուրի հովիտները: Ես ասում էի դա Աստծուն ամբողջ տարվա ընթացքում և Նա պատասխանեց. «Ես եմ ղեկավարը. Հովիտները քո ճանապարհի մի մասն են»: Չէի ցանկանա, որ այս տարի անակնկալի գայիք: Ուրախացեք սուրբեր. ավելի վատ է լինելու: Ահա թե ինչ էլ կասեմ, երբ ես վերջապես ոտքի եմ կանգնում, սատանան ավելի ուժեղ է հակառակվում:

Այսպիսով այս եկեղեցին չի մնա հանդարտ: Եվ ես չեմ պատրաստվում հեռանալ և հարգում եմ սատանայի կարողությունն ու սպառազիմությունը: Եվ ես կարող եմ ասել այն, ինչը քարոզիչները ասում էին առանց եռանդի. «Նա Ով ձեր մեջ է, ավելին է, քան նա, որ այս աշխարհի մեջ է»: Հիմա ես գիտեմ, թեև ինձ հարկ է եղել մի փոքր էլ սովորել, վերցնել Աստվածաշունչը և անել այն, ինչ անում եմ այսօր, ինչով որ մտնում ենք այս տարվա մեջ, և սպասում եմ, թե երբ եմ հայտարարելու, որ «Գաղտնի Բռունցք» նախագիծը դարձել է իրականություն: Մենք ներխուժել ենք «օդի իշխանի» տարածք և անում ենք այն, ինչին որ ընդունակ ենք: Այս նախագիծը մեծագույն և ամենահզոր ռադիոցանցն է, որ երբեւ ստեղծվել է աշխարհում: Եվ ես սպասում եմ սատանայի պատասխան քայլին, որովհետև նա գիտի, որ մենք իրականում ներխուժել ենք նրա տարածքը: Եվ ես ուզում եմ, որ եկեղեցին և ես պատրաստ լինենք գալիք արտասուրի հովիտներին: Ես նույնպես ուզում եմ, որ դուք ընդունեք ձեզ համար, որ արտասուրի հովիտները մեր ճանապարհի մի մասն են: Մի՛ հանձնվեք հովիտների պատճառով:

Ես պատրաստվում եմ խոսել երկու բանի մասին, որոնց մասին միշտ ասում եմ, երբ քարոզում եմ այս ուղերձը: «Պատճառը» կարևոր չէ: Երբ դու մտնում ես «արտասուրի հովիտ», սատանայի գործելակերպն է տանջել քեզ «ինչու՞ներով»: Եթե դու սխալ ես գործել և մեղադրում ես քեզ, ապա սատանային դուր է գալիս քո խղճի միջոցով հասցնել քեզ մահվան: Նա կնատի է քո ուսին և կասի. «Լավ, տղամարդ եղիր: Դու մեղավոր ես և գիտես թե ինչ ես արել, այնպես որ տանջվիր արածիդ համար»: Երբ սատանան այդպես է ասում քեզ, ես ուզում եմ, որ դու ասես Հիսուսի անունով. «Հեռացիր ինձանից, թող ինձ»:

Դուք կարող եք վերցնել Աստվածաշնչի այս համարը և ընդգծել նախադասությունները ու կտեսնեք, որ այնտեղ ոչ մի խոսք չկա «պատճառների» մասին: Կարևոր չէ, մեղավոր եք դուք, թե ոչ: «Երանելի է (անգլ.՝ originial է) այն մարդը», և հաջորդ խոսքը, որ ես ցանկանում եմ դուք ընդգծեք՝ «արտասուրի ձորով (անգլ.՝ hovhinstop) անցնելով»: Ինքնադատապարտությամբ դուք ձեզ կհասցնեք մահվան դուռը: Կանգ առեք և ձեզ համար տուն կառուցեք այնտեղ: Ոչ մի խոսք «պատճառների» մասին, միայն համոզնումք. «Երանելի է (անգլ.՝ originial է) այն մարդը, որը անցնում է արտասուրի ձորով (անգլ.՝ hovhinstop)»: Պատճառը կարևոր չէ: Բավական է մեղադրել ինքներդ ձեզ: Դուք չեք կարող վերստին գրել պատմությունը: Դա Աստծո բարությունն է և շնորհը մեզ համար: Հանձնեք դա իրեն: «Բարի, ես ինձ չեմ մեղադրում»:

Կամ ճիշտ հակառակը. «Չկա պատճառ, որ այս ամենը ինձ հետ պատահեր: Ես հավատարիմ էի: Ես արել եմ այն, ինչ կարող էի, բայց ողջ աշխարհը ինձ վրա է շուր եկել»: Սատանան կրօչի դատապարտության ուսից կարեկցանքի ուսին: Նա սիրում է այդպես վարվել: «ճիշտ է, ես չաետք է ծառայեմ այն Աստծուն, որը ինձ հետ այդպես վարվեց կամ թույլ տվեց, որ դա ինձ հետ պատահի: Դու մեղավոր չես»: Երբ դա պատահի, կրկին ասա. «Հեռացիր ինձանից», որովհետև պատճառը կարևոր չէ: Կարևոր չէ, որ դու մեղավոր չես: Արտասուրի հովիտները մեր ճանապարհի մի մասն են, և երանելի է արտասուրի հովիտը անցնող մարդը: Կարեկցանքը կսպանի քեզ: «Խավարի, անհույսություն և հոգեարքի մեջ եմ»: Հավաքիր վրաններդ և դուրս արի քո հովտից:

Ես քարոզում եմ հասուն կրոն: Արտասուրի հովիտները մեր ճանապարհի մի մասն են: «Անձրևը թափում է արդարների և անարդարների վրա», բայց երանելի է այն մարդը, որը անցնում է այդ հովիտներով: Նրանք ոչ միայն անցնում են դրանցով, թույլ տվեք մի բան էլ ավելացնել՝ այդ խոսքում չի ասվում ինչքան երկար են այդ հովիտները: Դուք կարող եք անցնել մեկ երկար քայլով կամ լինել այդտեղ բավականին երկար: Խոսքը չի ասում. «Օրինյալ է այն մարդը, որ անցնում է հովիտներով և չի մտածում որ կարող է մեռնել այնտեղ», կա միայն Աստվածային խոստմունք. «Դու կանցնես այն»: Սա ինչ-որ երևակայական աշխարհի կրոն չի, որը ասում է, որ իրականությունը այնքան էլ իրական չէ: Չեր հովիտը այնքան է դժվարանցանելի, որքան դուք եք կարծում, բայց այնտեղ կարևոր չէ մեղավոր ես դու թե ոչ. «Օրինյալ է այն մարդը, որը անցնում է»:

«Այսօր միգուցե այն օրն է, երբ ես դուրս կգամ այդտեղից», երբեք մի կորցրեք այդ հույսը: «Երանելի է այն մարդը, որը անցնում է»:

Այսօր երբ ես վերլուծում եմ իմ կյանքը, ես կարող եմ ասել, որ իհմնականում կյանքը լավանում է և այդ խոստովանությունը համարյա խենթացնում է ինձ, բայց այն իրոք լավանում է: Իմ կյանքը նման է մի երկար հովիտի, ժամանակ առ ժամանակ հանդիպող բլրակներով... Դուք անտանելի եք: Չեզ հետ անհնար է: Դուք չեք կարող պահել մարդկանց հոգեսոր շրջանակներում: Այդ դեպքում ինչպե՞ս եմ ես ասում, որ լավանում է: Եկեք շարունակենք...

Օրինված մարդը ոչ միայն անցնում է հովիտով, «Երանելի (անգլ.՝ oříhňajal է) է այն մարդը... ով անցնում է «Բարա-ի» ձորով (անգլ.՝ hōvītōvū)՝ «արտասուրի ձորով» այլ նաև «աղբյուրի պես է շինում» այն: Բնագրում ասվում է՝ նրանք դարձնում են այն «աղբյուրների տեղ»: Արդյոք չգիտե՞ք, որ մենք կարող էինք կանգ առնել «Շուլյսի Փողոց» հովտում: Ինչպես միշտ, ամենից վատ հովիտները գալիս են նրանցից, ովքեր համարվում են քրիստոնյա եղբայրներ: Բայց մենք դարձնում ենք այն «աղբյուրների տեղ», որովհետև չենք ասում «Ոչ»:

Հանգամանքները չպետք է դառնան մեզ համար վերջնական պատասխան: Օրինյալ մարդիկ չեն մահանում իրենց հովիտներում: Ըստ գրվածքի, երանելի մարդու նպատակը ոչ միայն հովիտը անցնելն է, այլ այն ծևափոխելը: Նրանք տեսնում են հնարավորություն հովիտները դարձնելու «աղբյուրների տեղ»: Երբ ես շատ էի ճանապարհորդում, սովորություն ունեի քարոզարշավի ժամանակ, առնվազն մեկ գիշեր, կամ մեկ երեկո հովվի հետ այցելել հիվանդանոց:

Ես գիտեմ ինչ է նշանակում այցելել մարդկանց, որոնք գտնվում են ծայրահեղ վիճակում և հեռանալ այնտեղից օրինված լինելով այդ մարդկանցից: Այն հովիտը, որը կարող է կործանել մարդկանց, դու դարձնում ես «աղբյուրի տեղ», մինչև որ այդ նույն հովիտը դառնա հնարավորություն ավելի շատ օրինություն ճառագելու և սա է իրական քրիստոնյայի նշանը:

Դիմա հարցը նրանում է, թե ինչպես են օրինված մարդիկ անցնում արտասուրի հովիտներով, նրանք անցնում են այդ հովիտները և դարձնում են այն աղբյուրների տեղ: Ինչպե՞ս: Վերադառնանք առաջին խոսքին, «Երանելի է (անգլ.՝ oříhňajal է) այն մարդը, ում զորությունը քեզանից է»: Յիսուսը երբեք չի ասել, որ մենք չենք անցնելու հովիտներով: Յակառակը, Նա ասել է, որ աշխարհում նեղություն կունենանք: Նա խոստացավ, որ այդ հովիտներում մեզ հետ կլինի, որ երբեք մեզ չի թողնի և երբեք չի լքի: Յիսուսը միայն սարերի Աստված չի: Աստված խոստացել է, որ երբ մենք մեր ձեռքերը հավատքով դնենք Նրա ձեռքերի մեջ, Նա երբեք չի թողնի:

«Խավարի մեջ մի կասկածիր այն բաների մասին, ինչը սովորել ես լույսի մեջ», սա էր իմ ուղերձը անցած կիրակի: Միգուցե դու չես տեսնում իրեն, սակայն Նա տեսնում քեզ: Յամոզված եղեք, «Ում Աստված սիրում է, նրան էլ խրատում է», գրված է Եբրայեցիներում: Իհարկե, «Կան զանազան փորձություններ», ասում է «Պետրոսը, բայց նա օգտագործում է նույն հունարեն

«զանագան օրինություններ» արտահայտությունը: «Աստված չի թողնի ձեզ ձեր կարողությունից վեր փորձվելու, այլ փորձության հետ ելքն էլ կպատրաստի»: Յունարենում, պատրաստի բառը, այնքան է անհատականացված, որքան որ, փորձություն բառը, որի մասին խոսում էի անցյալ կիրակի: «Երանելի է (անգլ.՝ օրինյալ է) այն մարդը, ում զորությունը քեզանից է»:

Աստված Եղիային ուղարկեց Քորեր հեղեղատի մոտ և կերակրեց նրան ագռավմերի միջոցով, և խոսքը ասում է, որ որոշ ժամանակ անց հեղեղատը ցանաքեց: Փ.Բ. Մայերը ասել է, Աստված սովորեցնում էր Եղիային վստահել ոչ թե բարիքներին, այլ Նրան, ով տալիս է դրանք: Ինչպես ես արդեն ասել եմ, Աստված մեզ լցնում է մի անորից մյուսի մեջ: Արտասուրի հովիտները նախատեսված են սովորեցնելու մեզ վստահել Աստծուն: Նա մեզ հետ է, և եթե մեր զորությունը Նրանում է, ապա այն ամենը ինչ մենք պետք է իմանանք, դա այն է, որ քայլում ենք Աստծու հետ, և հովիտները կարևոր չեն: «Երանելի է (անգլ.՝ օրինյալ է) այն մարդը, ում զորությունը քեզանից է, որ նրանց սրտերում պատրաստված ճանապարհներ կան»: Աստվածաշնչում ու՞ն մոտ է «Նրանց» բառը գրված չեղ տառերով: Բարձրացրեք ձեր ձեռքերը: «Նրանցը» գրված է շեղ տառերով և դա նշանակում է, որ այն ավելացված է թարգմանչի կողմից: Բնագրում անդրադարձ է կատարվում կրկին «Քեզ» բառին: Այսպիսով ստացվում է, որ երանելի է այն մարդը, ում զորությունը քեզանից է, և ում սրտում քո ճանապարհներն են: Զնշեք թարգմանչի կողմից ավելացրած «Նրանց» բառը: Այսպիսով կդառնա “Քո ճանապարհները”:

Աստված ոչ միայն հետաքրքրված է մեզանով, ոչ միայն նայում է մեզ և ոչ միայն տանում է մեզ մեր հովիտներով, այլ Նա ցանկանում է, որ մենք ճանաչենք Նրա ճանապարհները: Նա ցանկանում է, որ մենք ճանաչենք Նրա ճանապարհները, որովհետև պետք է իշխենք և թագավորենք Նրա հետ հավիտենության մեջ: Աստված ցավում էր, որ անապատում 40 տարվա պանդխտությունից հետո, իսրայելի որդիները տեսան միայն Նրա գործերը: Եվ միայն Սովուսը ճանաչեց Աստծու ճանապարհները: Քա՞նիսը մեզանից կարող են վկայել, որ այս 15 տարիների ընթացքում ճանաչել է Տիրոջ ճանապարհները: Եվ դուք տեսնում եք Նրան ավելի ու ավելի:

Թույլ տվեք ինչ որ բան ցույց տալ ձեր օրինակով: Քա՞նիսը գիտեն, որ իիմա Աստված ձեզանից ավելին է ակնկալում, քան սկզբում: Լավ, դուք սովորում եք Տիրոջ ճանապարհները: Քանի՞սն են գտնում, որ Աստծու համար կատարած ձեր զոհերի վկայություններով, այդպես հեշտ չեք պարտավորեցնի Նրան: Դուք սովորում եք Նրա ճանապարհները: Նա ձեզ տուն է տանում, կոփված զինվորներ: Մարդ, որ քո ուժի աղբյուրը Տիրոջը ճանաչելու մեջ է, Նրա ներկայությունը քեզ հետ է, և Նրա ճանապարհները չեն ընդհատվում «արտասուրի հովիտներում»:

Ես իիմա վերջացնում եմ: Խոսք 11. «Որովհետև Տեր Աստվածն արև և վահան է»: Սա Նրա ճանապարհների մի մասն է, - «որովհետև Տեր Աստվածն արև և վահան է»: Ահա թե ի՞նչ է Նա փորձում սովորեցնել մեզ: Ինչպիսի՞ն է արևի դերը Տիեզերքում: Ամեն ինչ պտտվում է նրա շուրջ, նա է կառավարում տիեզերական մարմինների հետագիծը: Տգետ ու պարզամիտ մարդիկ մտածում էին, որ արևը պտտվում է իրենց շուրջը: Բայց արևը կառավարում է: Արևը կյանք է տալիս, ջերմություն, լույս, մատակարարում: Ընկերու, առանց նրա դու չես աճի: Ահա թե ի՞նչ է իմանում երանելի մարդը, որ Տերն է ամենը ամենում:

Ասեմ ձեզ, որ այնքան էլ չեմ սիրում հովիտները, բայց ես փոքր եմ...: Ես մինչ այժմ բողոքում եմ Տիրոջը շատ բաների պատճառով, բայց ոչ այնքան շատ, որքան անում էի դա առաջ: Իրականում ես հավատում եմ, որ իիմա գտնվում եմ Աստծու հսկողության տակ ավելի շատ, քան ձեր հովիվը, երբ եկավ այստեղ 15 տարի առաջ: Ես վստահ եմ, որ ցանկանում եմ դա: Ահա թե ի՞նչ ենք սովորում ճանապարհին: Ես չեմ սիրում հովիտները, որոնցում գտնվում եմ, բայց նրանք ինձ որոշ բաներ են սովորեցրել, որոնք չեն սովորի հաղթանակների ժամանակ: Քրիստոնյաները սովորում են վստահել, և թույլ են տալիս “Որդուն” տիրել:

Վահան: Իմ փորձառությամբ ամենադժվար ընդունելի բանը հետևյալն է՝ հավատալ, որ Աստված թույլ չի տա մեզ հետ իր նախասահմանածից դուրս որևէ բան պատահի: Սատանան

Զորաց Տիրոջ հսկողության տակ է: Դևերը դեռ դրոյում են Նրա ներկայությունից: Ինչպես Աստված բարձրացրեց այդ Վահանը Յոթի Վրա, այդպես էլ Նա, Որպես Վահան, սովորեցնում է մեզ Իր իմաստությամբ և թույլ տալիս, որ հանդիպենք «արտասուրի հովիտների»: Նա թույլ է տվել այն ամենը, ինչ պատահել է քեզ հետ անցյալ տարի և ինչ դեռ պետք է պատահի: Արտասուրի հովիտներ անցնելու ձեր կարողությունը կմեծանա, այն ժամանակ, եթե հասկանաք, որ դուք գտնվում եք Աստծո տիեզերագծի մեջ, և որ Նա, Վահանի ննան թույլ չի տա ձեզ հետ պատահի այն, ինչը դուք չեք կարող տանել:

Եվ երրորդը, «Տերը շնորհը և փառք է տալիս»: Այո՛, կան հովիտներ, բայց կա նաև չվաստակած բարեհաճություն: Եթե ես նայում էի եկեղեցական աշխարհին, ինձ միշտ զարմացնում էր այն, որ որոշ քարոզիչներ, գտնվելով բեմի կենտրոնում և ստանալով ողջ փառքը, որքան շատ էին սիրում ասել այդ սխալ աստվածաբանական ուսմունքը՝ «Աստված Իր փառքը ոչ ոքի չի տա»: Կանգնած այնտեղ, նրանք ասում են, որ Աստված դա չի կարող անել: Իմ Աստվածաշունչը այստեղ պարզ ասում է, որ Աստված փառք է տալիս: «Տերը շնորհը է տալիս», չվաստակած բարեհաճություն, «և փառք»: Նա ոչ մեկի հետ չի կիսի Իր փառքը: Բայց Նա կտա փառք, Նա կօրինի, Նա կպատվի: Արտասուրի հովիտներ կան, բայց դա ամբողջ ճանապարհը չէ, դուք դրանց միջով անցնում եք: Եվ Տերը տալիս է փառք, և Տերը տալիս է շնորհը:

Վերջինը, բայց ոչ երկրորդականը, խոսք 8. «Ով Տեր՝ Զորաց Աստված»: Դուք գիտեք ինչ է նշանակում այդ անունը այնպես չէ՞: Ես քարոզել եմ Աստծո անունների մասին անցյալ կիրակի: Այս անունը խոսում է Նրա, ամեն ինչ հսկողության տակ պահելու հնարավորությունների մասին: Ես արդեն ասել եմ, սատանայի և նրա դևերի վերաբերյալ, որ Աստված ...: Աստվածաշնչում կան դեպքեր, օրինակ, Դեբորայի և Բարակի մարտը, երբ Աստված աստղերը ներգրավվեց մարտի մեջ: Նա խորտակեց փարավոնի բանակը Կարմիր ծովում: Ինչպես Տեր Զորաց Աստված, Նա հսկում է անշունչ առարկաները: Նա հսկում է Տիեզերքը: Նա հսկում է գերբնական էակներին, ինչպես հրեշտակներին, այնպես էլ դևերին: Նա հսկում է հեթանոս ազգերին ու երկրներին և նշանակված ժամանակին գործ ունենում նրանց հետ:

Ահա, թէ ինչ է նշանակում «Զորաց Տեր Աստված» անունը: Դա նշանակում է, որ Նա ունի կարողություն, մեր առջև ծառացած բոլոր խնդիրները լուծելու: «Ով Տեր, Զորաց Աստված, լսիր իմ աղոթքը, ականջ դիր, ով Հակոբի Աստված: (Սելլա)» կամ «մտածիր այս մասին»:

Դուք կարող եք կարդալ նախորդ 8 խոսքը և ոչինչ չընթանել, եթե կարդաք այն շտապելով: Այս սաղմոսը գրվել է Հակոբի մահվանից շատ հետո: Շատ երկար ժամանակ է անցել այն օրվանից, եթե նա մի ամբողջ գիշեր պայքարում էր հրեշտակի հետ: Շատ երկար ժամանակ է անցել այն օրվանից, եթե Հակոբը, ում անունը նշանակում է «գարշապարից բռնող», իրենը փնտրող և ամեն ինչ սեփականացնող, խորամանկ, էգուստ Հակոբը, Աստծո կողմից նոր անուն ստացավ և դարձավ “Իսրայել”, ինչը նշանակում է «իշխան, ում զորությունը Աստծո հետ է»: Այս խոսքում, ներշնչված սաղմոսերգուի միջոցով, Աստված խոսում է շատ կարևոր բանի մասին նրանց հետ, ովքեր կաղալով անցնում են «արտասուրի հովիտներով»: Նրանք, ովքեր աղաղակում են Աստծուն, որպեսզի Նա իր զորությունն իջեցնի իրենց խնդիրների վրա, ամեն տարի պետք է նորից սովորեն վստահել Աստծուն, և ընթացքում սովորեն Նրա ճանապարհները: Զորաց Տեր անունն է, որ մեզ ելք է տալիս:

Կարծում եմ, գիտեք, որ մենք խոսում ենք փոքր ֆինանսական խնդրի մասին կամ հիվանդության, կամ դստեր, կամ որդու, կամ սիրելիի, որը Պարսից ծոցում է, և մենք աղաղակում ենք. «Զորաց Տեր, Դու, որ արարել ես ամենը ինչ գոյություն ունի, կարո՞ղ ես իմ «արտասուրի հովիտում» հետաքրքրված լինել իմ խնդիրներով և ինձանով, որ այսքան փոքր են»: Այստեղ չի ասվում. «Ով Տեր Զորաց Աստված, լսիր աղոթքս, ականջ դիր Ով Իսրայելի Աստված»: Եթե այստեղ ասվեր. «Օ՛վ, Իսրայելի Տեր Աստված», և ես կրկնում եմ, որ շատ ժամանակ է անցել այն պահից, եթե փոխվեց Հակոբի անունը և բնավորությունը: Նա մահացավ որպես «Իսրայել» և ոչ թէ «Հակոբ»: Եթե այնտեղ ասվեր. «Ականջ դիր, Ով Զորաց Տեր, Ով Իսրայելի Աստված», ապա ես կասեի. «Ուրեմն ինձ հարկավոր է փոխվել, որպեսզի Աստված լսի ինձ»: Բայց այնտեղ ասվում է. «Ով Զորաց Տեր, լսիր իմ աղոթքը, Ով Հակոբի Աստված», այդ

խորամանկ, ամեն ինչ սեփականացնող որթը, ում կոչեցին Յակոբ, երբ մոր արգանդից դուրս եկավ իր եսասիրական ճանապարհով:

Ի՞նչ է Աստված փորձուն ասել ինձ և ձեզ, ովքեր դեմ առ դեմ հանդիպելու են «արտասուրի հովիտներ»: Յասանելի. Զորաց Տեր Աստված: Ընդունողը՝ յուրաքանչյուրը մեզանից... որովհետև Զորաց Տեր Աստվածը, նույնպես Յակոբի Աստվածն է: Մի բան կա Աստվածաշնչից, որ ինձ շատ է դուր գալիս. Եթե բոլոր մարդիկ, որոնց հետ Աստված գործ է ունեցել լինելին կատարյալ, ինչպես Եսայան էր, ես դրանց մեջ չեմ լինի: Բայց Զորաց Տեր Աստվածը նույնպես Յակոբի Աստվածն է՝ մեղանչող..., սայթաքող..., խորամանկ..., իրենը որոնող... Յակոբը դեռ կարող է լինել օրինված մարդ, ով իր «արտասուրի հովիտով» անցնելով, դառնում է դեպի Աստված և աղաղակում է Նրան զորություն ստանալու համար:

Ես ետ եմ նայում այն տարիներին, երբ Աստված առաջնորդել է ինձ: Նա գիտի իմ սիրտը, իմ անկումներն ու վերելքները: Նա գիտի ինձ ավելի լավ, քան որևէ մեկը: Եվ երբ ամեն ինչ փշրվում է, ես ցանկանում եմ Նրա կամքը և ցանկանում եմ հաճեցնել Նրան ավելի, քան որևէ մեկի: Միևնույն ժամանակ, որքանով է Նա ճանաչում իմ ճանապարհները, ես էլ ճանաչում եմ Նրանը: Ինձ շատ հաճելի է քարոզել այս Զատկի կիրակի, իմանալով, որ ծառայում ենք հարյալ Փրկչին, որ Զորաց Տերն է, նրանց, ովքեր ցանկանում են, որ Աստված կառավարի իրենց կյանքը, ովքեր ցանկանում են Նրա կամքը և Նրա ճանապարհները, և ովքեր «արտասուրի հովիտում» բարձրացնում են իրենց ձեռքերը դեպի Նրան, ես կրկնում եմ՝ Նա երբեք չի թողնի: Մեր զորությունը Նրա մեջ է, որովհետև Նա մեզ հետ է:

Նա Զորաց Տերն է, բայց Նա նույնպես Յակոբի Աստվածն է: Նա տարածվում է Երկնքից և «արտասուրի հովիտներում» բռնում մեր ձեռքից, ինչպես հայրը իր փոքրիկ Երեխայի, որի բնավորությունը դեռ կավի պես է: Բայց հայրը հոգ կտանի նրա մասին:

Զորաց Տերը, որը լսում է մեր աղոթքները, Յակոբի Աստվածն է: Դուք չպետք է Յռոմի Պապը լինեք, որ Նա լսի ձեզ: Ով էլ որ լինեք, և ինչ հանգանանքներում էլ լինեք, Աստված, Զորաց Տերը ձեր խնդիրների արժանի հակառակորդն է: Եվ քանի որ Նա Յակոբի Աստվածն է, Նա ցանկանում է ձեռքը մեկնել քեզ և առաջնորդել քեզ դրա միջով: